Քրեական դատավարության օրենսգիրք

Հոդված 265. Արտագնա դատական նիստը

1. Արտագնա դատական նիստ կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է անցկացնել միայն առաջին ատյանի դատարանը՝ հետևյալ դեպքերում՝

1) բոլոր մեղադրյալները զինծառայող են.

2) բոլոր մեղադրյալներն ազատությունից զրկելու հետ կապված պատիժ են կրում ~~.÷~~

3) բժշկական հարկադրանքի վարույթի շրջանակներում անձի հոգեկան առողջության վիճակով պայմանավորված անհնար է նրա՝ դատական նիստին մասնակցության ապահովումը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում արտագնա դատական նիստ կարող է անցկացվել զորամասի կամ զինվորական հիմնարկի տարածքում, ~~իսկ~~ 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ քրեակատարողական հիմնարկի տարածքում, իսկ 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ հոգեբուժական կազմակերպությունում:

3. Դատարանը մերժում է արտագնա դատական նիստ անցկացնելու միջնորդությունը, եթե՝

1) դատական նիստը միջնորդված վայրում անցկացնելը կարող է անհամաչափ դժվարություններ առաջացնել վարույթի մասնակիցների կամ վարույթին օժանդակող անձանց համար կամ

2) միջնորդված վայրում ողջամտորեն հնարավոր չէ ապահովել սույն օրենսգրքի 28-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները:

Հոդված 422. Բժշկական հարկադրանքի վարույթ սկսելը

1. Եթե նախաքննության ընթացքում ի հայտ են գալիս բժշկական հարկադրանքի վարույթի կիրառման հիմքեր, ապա ~~քննիչը~~ քննիչն անհապաղ, սակայն ոչ ուշ, քան այդ հիմքերն ի հայտ գալուց հետո 24 ժամվա ընթացքում կայացնում է

քրեական վարույթը բժշկական հարկադրանքի վարույթի փոխակերպելու մասին որոշում, որի պատճենն անհապաղ ուղարկում է հսկող դատախազին:

2. Եթե ընդհանուր կարգով իրականացվող դատաքննության ընթացում ի հայտ են գալիս բժշկական հարկադրանքի վարույթի կիրառման հիմքեր, ապա դատարանը ~~կողմերի կարծիքը լսելուց հետո~~ միջոցներ է ձեռնարկում հնարավորինս սեղմ ժամկետում կողմերի կարծիքը լսելու համար, որից հետո սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կայացնում է քրեական վարույթը բժշկական հարկադրանքի վարույթի փոխակերպելու մասին որոշում:

3. Եթե տվյալ վարույթով ներգրավված են մեկից ավելի մեղադրյալներ, ապա փոխակերպման մասին որոշում կայացնելուց առաջ սույն օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձին վերաբերող մասով վարույթն անջատվում է:

4. Բժշկական հարկադրանքի վարույթ սկսելու պահից 48 ժամվա ընթացքում վարույթն իրականացնող մարմինը այդ վարույթն սկսելու հիմք հանդիսացած որոշումների պատճենները հանձնում է այն անձին, որի նկատմամբ իրականացվում է բժշկական հարկադրանքի վարույթը, ինչպես նաև այդ անձի պաշտպանին կամ ներկայացուցչին՝ այդ փաստաթղթերին կցելով հասցեատիրոջ իրավունքների և պարտականությունների պարզաբանմամբ հուշաթերթ:

5. Եթե բժշկական հարկադրանքի վարույթ իրականացնելու՝ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերը վերանում են, ապա վարույթն իրականացնող մարմինը կայացնում է բժշկական հարկադրանքի վարույթը քրեական վարույթի փոխակերպելու մասին որոշում, որի պատճենն անհապաղ ուղարկում է վարույթի մասնակիցներին, իսկ քննիչը՝ նաև հսկող դատախազին:

6. Սույն հոդվածով նախատեսված փոխակերպման յուրաքանչյուր դեպքում վարույթը չի վերսկսվում: